



### Մանր կոռուպցիան Քաղաքացիական գրանցման գրասենյակներում

2010թ. հունիսին իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ և Գալստյանը ենթադրվող կոռուպցիոն գործողության է հանդիպել 3րագրանի Քաղաքացիական գրանցման գրասենյակում: Նրանից պահանջել են 1000 ՀՀ դրամ (մոտավորապես 3 դոլլար) ապօրինի վճար՝ իր տատիկի մահվան վկայականը ստանալու համար: Թեև պահանջվող կաշառքը չենքին է եղել, Գոռը վրդովվել է, որ աշխատողը նման չարաշահում է թույլ տալիս իր հանդեպ ընտանեկան վշտի պահին:



«ՇՊԱԿ-ները աջակցում են մանր կոռուպցիոն հարցերի լուծմանը»

հետ: Նրան տրամադրել են տեղեկատվություն համապատասխան օրենսդրական ընթացակարգի և դրա պահանջների վերաբերյալ, որի համաձայն բացառվում է նման վճարումը: Գոռն այդ տեղեկատվությունը ներկայացրել է Քաղաքացիական գրանցման գրասենյակ, որտեղ հաջողությամբ պահանջել ու ստացել է մահվան վկայականը՝ առանց կաշառք վճարելու:

«ՇՊԱԿ-ը շատ օգտակար է համայնքի համար», - ասել է Արմենը: «Մենք պետք է պայքարենք կոռուպցիայի դեմ միասին (քաղաքացիներ, ՀԿ-ներ, ՁԼՍ-ներ, պետական կառույցներ): Եթե քաղաքացիները շարունակեն կաշառակերության գոհ դառնալ, մենք չենք կարող հաղթահարել կոռուպցիան մեր հասարակության մեջ»:

Շատ լավ իմանալով որտեղ կարելի է ստանալ աջակցություն՝ Գալստյանը քննարկել է խնդիրը Կենտրոնի իրավաբանների

պետական կառույցներ): Եթե քաղաքացիները շարունակեն կաշառակերության գոհ դառնալ, մենք չենք կարող հաղթահարել կոռուպցիան մեր հասարակության մեջ»:

### ՇՊԱԿ-ները գրասենյակներ են բացում նոր վայրերում

Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները Երևանում, Վանաձորում, Գյումրիում և Կապանում այժմ սպասարկում են քաղաքացիներին նոր տեղերում: Ստորև ներկայացված է ՇՊԱԿ-ների համազգային ցանցը: Զանգահարեք ստանալու անվճար իրավաբանական աջակցություն

### ՇՊԱԿ-ների ուղեցույց

Մարզ/քաղաք	Հասցե	Թեժ Գիծ	Գործընկեր
Արագածոտն /Աշտարակ	Վ. Պետրոսյան 51/2	080 00 11 22	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Արարատ /Արարատ	Չարենց 2/4	080 00 11 17	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Արմավիր /Արմավիր	Շահումյան 68ա	080 00 11 18	Արմավիրի զարգացման կենտրոն
Գեղարքունիք /Գավառ	Բոշնադյան 1/1	080 00 11 16	Գեղարքունիքի առևտրաբարոյունաբերության պալատ
Կոտայք /Հրազդան	Կենտրոն Ա-2 քաղամաս	080 00 11 19	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Լոռի /Վանաձոր	82 Վարդանանց #1	080 00 11 12	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Շիրակ /Գյումրի	1 Տիգրան Մեծ # 2	080 00 11 21	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Սյունիք /Կապան	1 Ա. Մանուկյան #72	080 00 11 14	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Տավուշ /Իջևան	Անկախության 4/14	080 00 11 13	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Վայոց Ձոր /Եղեգնաձոր	Նարեկացի 18ա	080 00 11 20	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)
Երևան	7 Նալբանդյան # 2	080 00 11 10	Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ)

\*ընդունելության կենտրոններ, որտեղից քաղաքացիների դիմումները հղվում են տվյալ մարզի ՇՊԱԿ



**ՀԳՏԾ**  
Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

Սույն լրատվաթերթիկի բովանդակությունը կարող է չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

# ՇՊԱԿ

## Շահերի Պաշտպանության և աջակցության կենտրոն

ՇՊԱԿ տեղեկագիր - Թողարկում 5 - 2010 Սոյններ



### Վարորդը տապալում է ապօրինի գումարի կորզման փորձը

#### ՏԵՐԵԿԱՏՈՒ ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵՋ՝

- Մանր կոռուպցիան Քաղաքացիական գրանցման գրասենյակներում
- ԱՄՆ ՄՁԳ բարձրաստիճան պաշտոնյայի այցելում է Արագածոտնի ՇՊԱԿ
- Հարցազրույց Երևանի ՇՊԱԿ-ի համակարգող Մարատ Ատովյանի հետ
- Նորածնին բուժօգնության տրամադրում
- Վարորդը տապալում է ապօրինի գումարի կորզման փորձը
- Հարավային Կովկասի Հակակոռուպցիոն կենտրոնների փորձի փոխանակում
- ՇՊԱԿ-ները գրասենյակներ են բացում նոր տեղերում

Արևանի առաջարկությամբ, ֆերմեր Արմեն Մանուկյանը\* այցելել է Արագածոտնի մարզի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ)՝ հայտնելու, թե ինչպես են իրենից ապօրինի գումար կորզում մեքենայի տարեկան գրանցման գործընթացում:

Ըստ Մանուկյանի, Ոստիկանության բաժանմունքի ավտոտեսուչը հրաժարվել է ընթացք տալ ավտոմեքենայի գրանցման գործին՝ պահանջելով ավելի մեծ գումար, որը հավասարազոր է մեկ ուրիշ ավելի թանկարժեք ավտոմեքենայի գրանցվածքին: Վերջինս քաղաքացուն ստիպել է մտածել, որ պետական ծառայողը փորձում է գրպանել դրամային տարբերությունը:

Արագածոտնի ՇՊԱԿ-ը մեկն է Հայաստանում տեղակայված տասնմեկ հակակոռուպցիոն կենտրոններից: Գործարկվելով տեղական հասարակական

կազմակերպությունների կողմից՝ կենտրոնները կոռուպցիայից տուժած անձանց տրամադրում են անվճար իրավաբանական աջակցություն՝ այցելության կամ հեռախոսազանգի միջոցով: Կենտրոնի իրավաբաններն ուսումնասիրել են գործը և պարզել, որ քաղաքացուն ստիպել են վճարել օրենքով սահմանված հարկից համարյա երեք անգամ ավել:

Երբ ՇՊԱԿ-ի իրավաբանները հավաքած ապացույցներով հանդիպել են ավտոտեսուչին, նա ընկրկել է և շտկել գումարի չափը:

Արմենը շատ գոհ է մնացել արդյունքից: «Ես շատ շնորհակալ եմ ՇՊԱԿ-ից իրենց կատարած աշխատանքի համար: Նման կենտրոնի գոյությունը Հայաստանում անհրաժեշտություն է», - ասել է նա:

\* Բողոքողի անունը և համապատասխան հղումները փոփոխված են՝ գաղտնիությունը պահպանելու նպատակով:



### ԱՄՆ ՄՁԳ բարձրաստիճան պաշտոնյայի այցելությունները Արագածոտնի ՇՊԱԿ

2010թ. օգոստոսի 3-ին ԱՄՆ ՄՁԳ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով պատասխանատուի տեղակալ Ջոնաթան Չեյլը այցելել է Արագածոտնի մարզի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն (ՇՊԱԿ)՝ Հայաստանի քաղաքացիների հակակոռուպցիոն մախաձեռնությունների իրականացման մարտահրավերները և ներգործությունը քննարկելու նպատակով:

ՇՊԱԿ-ի համակարգող Մանուշ Հեպոյանը և իրավաբանները նկարագրել են կենտրոնի առօրյա աշխատանքը, ինչպես նաև կոռուպցիայից տուժած քաղաքացիներին իրավաբանական աջակցության, հասարակական իրազեկման և հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման գործընթացների մարտահրավերները և ներգործությունը: Նրանք խոսել են աշխատանքին վերաբերող մի շարք այլ թեմաների շուրջ. որո՞նք են այն հանգամանքները, որ դրոն են բնակիչներին կոռուպցիոն գործողությունների, ի՞նչ մեթոդներ է կենտրոնը կիրառում իր ծառայությունները հրապարակելու համար, ինչպիսի՞ կոռուպցիոն բողոքներ են ստանում կենտրոնները, ինչպե՞ս է կենտրոնը համագործակցում տեղական կառավարման մարմինների հետ:



«ԱՄՆ ՄՁԳ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով պատասխանատուի տեղակալ Ջոնաթան Չեյլը հանդիպում է Արագածոտնի մարզի ՇՊԱԿ-ի անձնակազմին»

բարեփոխումների խթանման գործում, Ապարանի և Թալինի քաղաքացիական գրանցման գրասենյակների հետ համատեղ, ինչպես նաև առանձնահատուկ պլանները՝ կապված պետական ոլորտում կոռուպցիայի հանգեցնող ընթացակարգային և ինստիտուցիոնալ թերությունների շտկման հետ:

Բացի այդ, Չեյլը կարճ համդիպում է ունեցել ՇՊԱԿ-ի շահառուներից մեկի հետ: Վերջինս Արագածոտնի բնակիչ է, ում խնդիրը դրական լուծում է ստացել կենտրոնի իրավաբանական աջակցության շնորհիվ: Շահառուի պատմածը ցույց է տվել մարզային մակար-դակով իրավաբանական աջակցության տրամադրման կարևորությունը: Եթե իրավաբանական աջակցություն տրամադրվի միայն

մայրաքաղաք Երևանում, այն դյուրամատչելի չի լինի շատ մարդկանց համար, ովքեր կարիք ունեն նման ծառայությունների:

Այցելության ավարտին Չեյլը շնորհակալություն է հայտնել ՇՊԱԿ-ի անձնակազմին նրանց կատարած աշխատանքի համար և խրախուսել ԱՄՆ ՄՁԳ ուշադրությանը ներկայացնելու այն բոլոր ոլորտները, որտեղ անհրաժեշտ կլինի Առաքելության հնարավոր օժանդակությունը՝ կոռուպցիայից տուժած անձանց օգտին կենտրոնի բնականոն ու շարունակական գործունեությունը ապահովելու համար:

ՇՊԱԿ-ի համակարգողը նաև Չեյլին ներկայացրել է, թե ինչպիսի հաջողություններ են ունեցել հակակոռուպցիոն

### Հարցազրույց



Մարատ Ատովյանի հետ

պետական մարմինների համար, շահառուներին տրամադրում ենք իրավական ակտերի պատճեններ, պաշտպանում ենք քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարաններում և իրավապահ մարմիններում:

#### 2. Այդ ծառայությունները վճարովի՞ են:

Բոլոր մեր ծառայությունները անվճար են:

#### 3. Ինչպե՞ս երևանի բնակիչները կարող են դիմել ՇՊԱԿ իրավական աջակցություն ստանալու համար:

Երևանի բնակիչները կարող են այցելել մեր գրասենյակ, զանգահարել 080001110 անվճար թեժ գծով կամ փոստով ուղարկել իրենց բողոքները:

#### 4. Կենտրոնը հիմնականում ի՞նչ բողոքներ է ստանում:

Մեր Կենտրոնը սկսել է գործել 2010 թվականի օգոստոսից: Այս ընթացքում մոտ 450 հոգի է դիմել մեր ՇՊԱԿ և նրանցից յուրաքանչյուրը ունի իր անձնական խնդիրը: Սակայն, եթե մենք ամփոփենք այդ բողոքները, ապա կարող ենք ասել, որ շատ դեպքերում քաղաքացիները դժգոհում են դատական ակտերից, իրավապահ մարմինների, սոցիալական ապահովության մարմինների, կադաստրի, նոտարների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատանքից և այլն: Ստանում ենք նաև բողոքներ աշխատողների իրավունքների ոտնահարման և փաստաբանների կողմից էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ:

#### 5. Ի՞նչ հաջողություններ ունի Կենտրոնը քաղաքացիների ստացված բողոքները դիտարկելիս:

Ինչպես արդեն նշել եմ, մենք քաղաքացիներից ստանում ենք բազմաթիվ բողոքներ: Մենք դիտարկում ենք յուրաքանչյուր բողոքը և որոշում, թե ինչպես կարող ենք օգնել անձին: Ոչ բոլոր բողոքներն են ընդունելի, քանզի նրանք չեն պարունակում կոռուպցիոն ռիսկեր կամ օրենքի խախտումներ: Բայց եթե գործում նկատում ենք խնդիրներ, ապա ուղարկում ենք համապատասխան պաշտոնական գրություններ իրավապահ մարմիններին և տարբեր պետական առյառններին: Ներկայիս դրությամբ քաղաքացիների դիմումների վերաբերյալ հասցեագրել ենք բազմաթիվ պաշտոնական գրություններ տարբեր պետական մարմիններին: Քաղաքացիների իրավունքների

Մարատ Ատովյանը Երևանի ՇՊԱԿ-ի նորանշանակ տնօրենն ու ավագ իրավաբանն է: Այս առումով նա պատասխանատու է քաղաքացիների բողոքների վերլուծության, իրավաբանական խորհրդատվության տրամադրման, պետական մարմինների հետ համագործակցության և դատարանում քաղաքացիների շահերը ներկայացնելու համար: Նա նաև պատասխանատու է հակակոռուպցիոն սեմինարների և այլ հանրային գործողությունների կազմակերպման համար: Ատովյանը եվրոպական ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի դասախոս է, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի վարչության անդամ, փաստաբան: Ներկայումս Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան գործարկում է թվով 9 շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ և ընդունարաններ՝ Երևանի ՇՊԱԿ-ը ներառյալ:

#### 1. Խնդրում եմ տեղեկացրեք այն ծառայությունների մասին, որոնք ՇՊԱԿ-ը մատուցում է քաղաքացիներին:

Մեր ՇՊԱԿ-ը մատուցում է իրավաբանական ծառայություններ բնակչության տարբեր խմբերին: Մենք տրամադրում ենք իրավաբանական խորհրդատվություն, վերլուծում ենք քաղաքացիների բողոքները, կազմում ենք հայցադիմումներ, բողոքներ դատարանների և դիմումներ տարբեր

պաշտպանությունը երկար և բարդ գործընթաց է: Օրինակ մենք պաշտոնապես դիմում ենք այս կամ այն մարմնին նկարագրելով քաղաքացու խնդիրը, խնդրելով քաղաքացու խնդրի վերաբերյալ տրամադրել մեզ պարզաբանումներ, սակայն երբեմն ստանում ենք պատասխան, որը պարունակում է մեզ արդեն հայտնի տեղեկություններ: Այս պարագայում մենք կրկին անգամ դիմում ենք նույն կառույցին: Եթե ուզում ենք արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ և պաշտպանել մարդու իրավունքները, ապա պետք է մեր կառավարման համակարգում ներդնենք արդյունավետ կառավարման տարրերը: Մեր Կենտրոնը ունի նաև հաջողված դեպքեր: Օրինակ, մենք պաշտպանել ենք քաղաքացիների իրավունքները և կանխել ենք կոռուպցիոն դրսևորումները ճանապարհային ոստիկանության տեսուչների, ինչպես նաև ոստիկանության քննիչների հետ հարաբերություններում: Ունենք նաև մի շարք շահառուներից ստացված շնորհակալական նամակներ:

#### 6. Ինչպե՞ս եք նախատեսում աշխատել կառավարական մարմինների, ՋԼՄ-րի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլոց հետ հակակոռուպցիոն միջոցների իրականացման առնչությամբ:

Համոզված եմ, որ հակակոռուպցիոն միջոցների իրականացման գործընթացում համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՋԼՄ-ների, ՀԿ-ների, կրթական հաստատությունների հետ ուղղակի պարտադիր է: Մենք պարբերաբար հանդիպում ենք քաղաքացիական ծառայողների հետ տարբեր պետական ինստիտուտներում իրենց վերապատրաստման դասընթացների ժամանակ և նրանց հետ քննարկում ենք հակակոռուպցիոն և իրավական թեմաներ, համագործակցում ենք հեռուստաալիքների, թերթերի և հասարակական կազմակերպությունների հետ:

#### 7. Ի՞նչ խորհուրդ կտաք այն քաղաքացիներին, որոնք իրենց կոռուպցիայի գոհ են զգում:

Խորհուրդ եմ տալիս այդ մարդկանց դիմել մեր Կենտրոն և մենք կանենք ամեն հնարավորը նրանց աջակցելու համար: Խորհուրդ եմ տալիս նաև քաղաքացիներին դիմել մեզ և ստանալ անհրաժեշտ իրավական տեղեկատվություն մինչև պետական մարմիններին դիմելը, քանի որ լավ տեղեկացված անձը պաշտպանված անձ է:

### Նորածնին բուժօգնության տրամադրում

2010թ. ապրիլին Արտակ Համբարձումյանն իր չորս ամսական երեխային տարել է Հրազդան քաղաքի պետական հիվանդանոց, որտեղ բժշկը գտել է, որ երեխային անհրաժեշտ է տեղափոխել Երևանի ավելի լավ սարքավորումներով հագեցած հիվանդանոց:

Հիվանդանոցի համապատասխան աշխատակիցը խոստացել է ուղեգիր տալ երեխային Երևան տեղափոխելու համար, ինչը նա լիազորված է անել ըստ պետական անվճար բուժօգնության ծրագրի՝ նախատեսված մինչև յոթ տարեկան երեխաների համար: Այդուհանդերձ, հիվանդանոցի աշխատակիցը տեղեկացրել է Համբարձումյանին, որ Երևանում բժշկի ծառայությունների դիմաց նա պետք է վճարի 15000 ՀՀ դրամ՝ մոտավորապես նրա ամսական աշխատավարձի 20%-ը: Երեխայի հայրը կասկածել է, որ վճարումն անօրինական է: Նա հավատացած էր, որ Հրազդանի հիվանդանոցի աշխատակիցը, ամենայն հավանականությամբ, ստանալու է ենթադրվող ոչ-պաշտոնական վճարման մի մասը, ուստի որոշել է խորհրդակցել Կոտայքի ՇՊԱԿ-ի հետ:

ՇՊԱԿ-ի իրավաբանները Համբարձումյանին տրամադրել են օրենսդրական հղումներ, որոնք հաստատում են անվճար բուժօգնություն ստանալու նրա իրավունքը: Այդ փաստաթղթերը ներկայացնելուց հետո և իմանալով, որ Համբարձումյանը իրավաբանական խորհրդատվություն է ստանում ՇՊԱԿ-ից, Հրազդանի հիվանդանոցի աշխատակիցն այլևս չի հիշատակել 15000 ՀՀ դրամի մասին և անվճար ուղեգիր է տվել երեխային Երևան տեղափոխելու համար:

«Երեխան տեսողության հետ կապված լուրջ խնդիրներ ուներ և եթե չստանար համապատասխան բուժօգնություն, կարող էր կորցնել տեսողությունը», - ասել է հանգստացած հայրը: «Ես չցանկացա վճարել այդ գումարը, այդ իսկ պատճառով դիմեցի Կոտայքի ՇՊԱԿ»:

Համբարձումյանից այլևս լրացուցիչ ոչ-պաշտոնական վճարումներ չեն պահանջել, և նրա երեխան ստանում է անհրաժեշտ բուժօգնություն:



«ՇՊԱԿ - ճերը իրավաբանական աջակցություն են ցուցաբերում երեխաներին անվճար բուժօգնություն տրամադրելու համար»:

### Փորձի փոխանակում Հարավային Կովկասի հակակոռուպցիոն կենտրոնների միջև

2010թ. հուլիսի 28-30-ը ԱՄՆ ՄԶԳ/ Հայաստան Հակակոռուպցիոն

Բաքվի ԵԱԳԿ գրասենյակի լրացուցիչ ֆինանսական օժանդակությամբ: ԱՄՆ ՄԶԳ/Վրաստանի առաքելության տնօրեն Ջոք Քոնլին միջոցառման բացման ժամանակ նշել է, որ կենտրոնների կարևորագույն մանդատն է խթանել կառավարության առավել թափանցիկ ու արդյունավետ գործունեությանը, որն ի վերջո կբերի հասարակության օգտին ռեսուրսների արդյունավետ բաշխմանը:



«Համաժողովի մասնակիցները միջոցառման ավարտին»

գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ) Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կազմակերպել է Հարավային Կովկասի Հակակոռուպցիոն կենտրոնների համաժողով: Միջոցառման ժամանակ առաջին անգամ հավաքվել են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջազգային ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 25 ներկայացուցիչներ՝ հակակոռուպցիոն կենտրոնների գործարկման լավագույն փորձը և քաղված դասերը փոխանակելու նպատակով: Հակակոռուպցիոն կենտրոնները Հայաստանում հայտնի են որպես ՇՊԱԿ-ներ (Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոններ), իսկ Ադրբեջանում և Վրաստանում՝ ՇՊԻԿ (Շահերի պաշտպանության և իրավաբանական խորհրդատվության կենտրոններ):

ՀԳՄԾ ֆինանսական աջակցությամբ և տեխնիկական ղեկավարմամբ Հայաստանում ներկայումս գործում է ՇՊԱԿ-ների ազգային ցանց: ՇՊԱԿ-ները հասարակական բողոքների ընդունման գրասենյակներ են, որտեղ կոռուպցիայից տուժած անձինք ստանում են անվճար և գաղտնի իրավաբանական աջակցություն՝ այցելության կամ հեռախոսազանգի միջոցով: Կենտրոնները նաև կարևոր դեր են խաղում կոռուպցիոն ոլորտների հատկորոշման և կանխարգելիչ օրենսդրական բարեփոխումների խթանման գործում:

Համաժողովը ֆինանսավորել է ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը՝

վետության բարձրացմանը չորս կարևորագույն ոլորտներում՝ ա) Հակակոռուպցիոն կենտրոնների ցանցի գործարկում, բ) հակակոռուպցիոն բարեփոխումների ընդունման ռազմավարությունների մշակում, գ) կոռուպցիայից տուժած անձանց իրավաբանական աջակցության տրամադրում, դ) կենտրոնների ֆինանսական կայունության ապահովման այլընտրանքներ:

Համաժողովի արդյունքում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հակակոռուպցիոն կենտրոնների անձնակազմերը առավել լավ են ծանոթացել իրենց աշխատանքի բաղադրիչների հետ կապված հաջողված մոտեցումներին: Նրանք նաև նախնական կապեր են հաստատել միմյանց հետ, որոնք կարող են ապագայում վերածվել շարունակական համագործակցության: